ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2025 թվականի N 968 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2342-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի ««ՔՐԱՈՒԴ ԷՖՖՈՐԹ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանում նախատեսվող կառուցապատման ներդրումային ծրագրին հավանություն տալու և ծրագրի իրականացման նպատակով հողամասերն ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 2342-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունը՝

1) որոշման N 1 հավելվածի 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«Ներդրողի կողմից առաջարկվում է Ընկերության սնանկության գործով կառավարչի կողմից 2025 թվականի հուլիսի 1-ին տրամադրված տեղեկանքում

ընդգրկված՝ 2023 թվականի սեպտեմբերի 11-ից հետո մինչև 2025 թվականի հուլիսի 1-ը Ընկերության պարտատերերի գրանցամատյանում գրանցված Շահառուների հետ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 1-ը կնքել Ընկերության սնանկության գործով 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ գրանցված և չբավարարված պահանջների զիջման (ցեսիայի) պայմանագիր՝ դրա դիմաց առաջարկելով նույն ժամկետում կնքել ՀՀ, Երևան, Դավթաշեն, Տիգրան Պետրոսյան 81/2 հասցեում կառուցվող շենքից՝ Շահառուի կողմից Ընկերության հետ կնքված փոխառության կամ այլ գործարքների հիման վրա ապագայում ձեռք բերվելիք գույքային միավորի կամ համարժեք գույքային միավորի նկատմամբ 1 քմ-ի համար նույն գնով ու պայմաններով (բացառությամբ բնակարանի ներքին հարդարման և կահավորման աշխատանքների) անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագիր՝ պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ Ընկերության պարտատերերի գրանցամատյանում գրանցված և չբավարարված պահանջի չափով զեղչված (գույքի արժեքից այդ չափով նվազեցված) գնով, բայց ոչ պակաս, քան հազար դրամով: 2023 թվականի սեպտեմբերի 11-ից հետո մինչև 2025 թվականի հուլիսի 1-ը Ընկերության պարտատերերի գրանցամատյանում գրանցված, հաստատված պահանջներ ունեցող գույքային միավոր գնելու նպատակով փոխառության կամ այլ պայմանագրեր կնքած և գումար վճարած ֆիզիկական անձինք ծրագրի համատեքստում նույնպես համարվում են Շահառու՝ ի լրումն որոշման N 1 հավելվածի 1-ին կետում նշված Շահառուների:».

2) որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ